ՈՎ ՊԷՏՔ Է ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Վարդենիսի շրջանը 175 կիլոմետր սահման ունի Ադրբեջանի հետ: Մինչեւ վերջերս, չնայած բազմաթիւ յարձակումներին, այդ սահմանները պահպանւում էին, այսպէս ասած, Աստծոյ զօրութեամբ, եթէ չհաշուենք այն հատուկենտ միլիցիայի պահակակէտերը, որոնք կան գիւղերում եւ որտեղ պահակութիւն էին անում շրջանի ներքին գործերի բաժնի մէկ կամ երկու աշխատակից: Այնինչ արդեն մէկ ամիս է Վարդենիսի սահմանամերձ ադրբեջանական Քելբաջարի շրջանում, Ջոդի հարեւանութեամբ, անընդհատ աւելանում են ՕՄՕՆի եւ 4րդ բանակի ուժերը: Հաւաստի աղբիւրները յայտնում են, որ նշուած զօրամասերը ունեն ռազմական զրահապատ տեխնիկա եւ պատրաստ կանգնած 8 Ու-35 տիպի ռազմական ուղղաթիռներ:

ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՆԱԾԱԽՈՒՄ

Յուլիսի 18ին ժամը 17ի սահմաններում Գորիսի շրջանի խնածախ գիւղի արօտավայրի վրա յարձակում է կատարուել Լաչինի շրջանի Միհրէնդ գիւղի կողմից: Սպանել են երկու հովիւների, փշել-տարել են 1000 գլուխ ոչխար:

Ցաւօք, երբ այս էլ որերոդ անգամ նման դէպք է կատարւում, Գորիսի ինքնապաշտպանական խորհուրդը՝ ներկայ իշխանութիւնները, անհաղորդ կատարուող դէպքերին՝ զբաղուած են շէնքային տեղափոխութիւններով, կոմկուսի «ազգայնացուած» ունեցուածքը իւրացնելու առաջնահերթ գործի իրականացման առաքելութեամբ տոգորուած: